ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 օգոստոսի 2018թ. N 58-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է**՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 23-ի արտահերթ նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը*.

1.1. Դրամական հատկացումներ կատարելու մասին.

*զեկ. համայնքի ղեկավար Վ. Հովհաննիսյան*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | բացակա | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | [signature] | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | [signature] | | |
| Գաբրգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | [signature] | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | [signature] | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | բացակա | | |
| Սարգսյան Համլետ Ժորայի | [signature] | | |
| Սիմոնյան Արտուշ Լյովայի | [signature] | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | [signature] | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- .......7....... դեմ-.......0....... ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

[illegible] օգոստոսի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 օգոստոսի 2018թ. N 59-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով,հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշմամբ հաստատված կարգի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաշվի առնելով մասնագիտացված բժշկական հաստատությունների կողմից տրված բժշկական եզրակացությունները (էպիկրիզները) և բուժման շարունակականության անհրաժեշտությունը՝ Ջերմուկի համայնքի 2018 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից ֆինանսական օգնություն տրամադրել Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչներ Խաչիկ Ենոքյանին և Սմբատ Թադևոսյանին՝ համապատասխանաբար 200 000 (երկու հարյուր հազար) և 100 000 (հարյուր հազար) դրամի չափով:

2. Ս/թ օգոստոսի 20 ին Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղում բռնկված հրդեհի հետևանքով գյուղի բնակիչ Գարգին Գրիշայի Առաքելյանի այրված տունը վերականգնելու նպատակով Ջերմուկ համայնքի 2018 թվականի բյուջեից կատարել դրամական հատկացում երեք միլիոն դրամի չափով՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետին համապատասխան դրամական հատկացմամբ ձեռք բերվելիք ապրանքների գնումը կատարելով մեկ անձից:

3. Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղում երիտասարդական կենտրոն ստեղծելու և ակտիվ երիտասարդներին տրամադրելու նպատակով գյուղի Մշակույթի տան մի հատվածը վերանորոգելու, ինչպես նաև Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի, «Ջերմուկի համայնքի քաղաքային գրադարան» համայնքային հիմնարկի և Կեչուտ գյուղի հանդիսությունների սրահի համար գույք ձեռք բերելու նպատակով անհրաժեշտ չափով կատարել դրամական համապատասխան հատկացումներ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաղաջանյան Սանասար Խաչատուրի | բացակա | | |

| | | | |
|---|---|---|---|
| Բագրատյան Արտակ Կառլենի | [signature] | | |
| Քոնիաթյան Մխիթար Խաչատուրի | [signature] | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | [signature] | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | [signature] | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | բացակա | | |
| Սարգսյան Համիկ Ժորայի | [signature] | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | [signature] | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | [signature] | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....7.... դեմ-....0.... ձեռնպահ- ....0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 օգոստոսի 23
Ջերմուկ